

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՑԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՏԻԱՐ ՋՈՐՋ
ԴԵՈՒՔՄԵՋՅԱՆԻՆ՝ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԹԻՎ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՏԻԱՐ ՋՈՐՋ ԴԵՈՒՔՄԵՋՅԱՆԻՆ

Սակրամենտո

Խորապես հուզվեցինք Սան Ֆրանցիսկոյի աղետալի երկրաշարժի լուրը ստանալով: Կզգանք Ձեր ծանր վիճակը, նույնքան ծանր վիշտը ամբողջ ամերիկյան ժողովրդի: Մեր Եկեղեցին, մենք բոլոր հայերս, որ անցյալ տարի ահռելի երկրաշարժին տասնյակ հազար զոհեր ունեցանք, գուցե ավելի քան ուրիշներ հասկանում ենք Ձեր հոգեկան տագնապը, Ձեր ցավը:

Հանուն Հայ Եկեղեցու և Հայաստանի ժողովրդի ներկայացնում ենք մեր խորին ցավակցությունները և մնում ենք աղոթող Սան Ֆրանցիսկոյի զոհերի հոգիների խաղաղության համար: Ատված Սուրբ Հոգով թող մխիթարի զոհյալների հարազատներին:

Կիրակի, 22 հոկտեմբերին, Մայր տաճարում պիտի կատարենք հոգեհանգստյան պատարագ և արարողություն՝ Սան Ֆրանցիսկոյի զոհվածների հիշատակին:

Հարգանոք և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
19 հոկտեմբերի 1989 թ.